ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ

Ծնվել է 1888թ., Ելիզավետպոլ (այժմ՝ Գյանջա) քաղաքում: Սկզբնական կրթությունն ստացել է քաղաքային վեցդասյա, ապա՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Սովորել է Դորպատի (Տարտու) համալսարանում (1912-1915): Հեղափոխական գործունեության մեջ ներգրավվել է Ներսիսյան դպրոցում սովորելիս, Դորպատում ընտրվել է ՌՍԴԲԿ ընդհատակյա ուսանողական կոմիտեի անդամ:

1915թ. վերադարձել է Ելիզավետպոլ և կատարել հեղափոխական աշխատանք: 1915-1917թթ. կուսակցական-կազմակերպչական գործունեություն է ծավալել բանակում (հյուսիսային Իրան): Դիլմանում ընտրվել է զինվորների պատգամավորների խորհրդի նախագահ: 1917-1921թթ. գործել է Թիֆլիսում, ընտրվել ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի նախագահության անդամ և քարտուղար, ապա՝ ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի անդամության թեկնածու: Երեք անգամ ձերբակալվել է և բանտարկվել Մետեխի, Քութայիսի և Բաթումի բանտերում: Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նշանակվել է Թիֆլիսի Հավլաբար, Մեյդանի և Նավթլուղ շրջանների հեղկոմի նախագահ:

1922թ. տեղափոխվել է Հայաստան:

1922-1923թթ. Ա. Շահսուվարյանը եղել է ՀԿ(բ)Կ կենտկոմի բաժնի վարիչ, 1924-1928թթ.՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար, 1929-1931թթ.՝ Անդրֆեդերացիայի աշխատանքի ժողկոմի տեղակալ, 1931-1934թթ.՝ ՀԽՍՀ բանգյուղտեսչության ժողկոմի տեղակալ: 1935-ից ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալն էր, 1937 թվականից միաժամանակ զբաղեցրել է Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահի պաշտոնը:

1938թ. որպես <<Ժողովրդի թշնամի>> դատապարտվել է գնդակահարության:

1954թ. ԽՍՀՄ Գերագույն դատարանի որոշմամբ արդարացվել է: